

Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 25 ՏԱՐԻՆ ԵՎ ՆՐԱ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը և սովետական կարգերի հաստատումը նոր լուսավոր ուղի բացեցին հայ ժողովրդի առաջ: Ապահով կյանք, խաղաղություն և ազնիվ աշխատանք Սովետական Միության ժողովուրդների բազմազգ ընտանիքում, ահա այն վիճակը, որի շնորհիվ մեր ժողովուրդը կարողացավ ավելի քան երբեիցե ծավալել իր մշակույթի զարգացումը: Հնարավոր դարձավ ոչ միայն վերացնել անգրագիտությունը, ապահովել ընդհանուր ուսուցումը, բացել և հետագայում ընդլայնել բազմաթիվ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ, այլև ժողովրդի ուշադրությունը կենտրոնացնել գիտության զարգացման վրա, Հայաստանում զարգացնել ժամանակակից գիտությունը: Հասկանալի է, որ գիտության զարգացման աստիճանի մասին չի կարելի դատել վիճակագրական, այսինքն քանակական տվյալների հիման վրա: Բայց, երբ մենք հիշում ենք, որ հեղափոխությունից առաջ Հայաստանում գիտական աշխատողների թիվը կարելի էր հաշվել մատների վրա, երբ այդ թիվը Հայրենական պատերազմի տարիներին հասել էր շուրջ հազարի, իսկ այժմ մոտենում է մոտ 10 հազարի, մենք կարող ենք զնախատել այն անսահման հնարավորությունները, որ ձեռք է բերել Հայաստանը գիտական աշխատանքի բնագավառում: Ընդգծենք նորից, որ գիտության մեջ քանակական տվյալները վկայում են լուի հնարավորությունների մասին, իսկ զարգացման աստիճանը լսորոշվում է առաջին հերթին գիտական արտադրանքի մակարդակով, նրա որակով, նրա տեսական և գործնական նշանակությամբ, այն տեսակարար կշռով, որ ունի մեր գիտությունը սովետական և համաշխարհային գիտության մեջ:

3 Վ. Հ. Համբարձումյանի ղեկուցումը, կարգացված ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովում, 26 մարտի, 1969 թ.:

Արդի գիտության զարգացումը անհնարին է առանց գիտական աշխատանքի պատշաճ կազմակերպման և ուժերի համախմբման։ Ահա թե ինչու, հանրապետության կյանքում բացառիկ նշանակություն ունեցավ այն փաստը, որ 1935 թ. ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան հանրապետական կառավարության աջակցությամբ ստեղծեց այստեղ իր մասնաճյուղը՝ ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալը, որը հետագայում, մասնավորապես այն ժամանակվանից, երբ մասնաճյուղը ղեկավարեց ակադեմիայի գիտնական և մեծ հայրենասեր՝ ակադեմիկոս Հ. Օրբելին, վերածվեց ՀՍՍՀ գիտության իսկական կենտրոնի։ Միաժամանակ պետք է նշել, որ նախապատերազմյան տարիներին շատ արագ աճում էին մեր բարձրագույն ուսումնական հաստատությունները։ Այդ բոլորը նախապայմաններ ստեղծեցին Հայաստանում ազգային գիտությունների ակադեմիա ստեղծելու համար։ Այդ խնդիրը համարյա հասունացել էր արդեն 1941 թ., սակայն պատերազմը, հասկանալի պատճառներով, հետաձգեց դրա իրականացումը։ Ամենամեծ վնասն այն էր, որ հայրենիքի համար մղված կռիվներում զոհվեցին բազմաթիվ ազնիվ, երիտասարդ գիտական աշխատողներ, որոնց գիտական ստեղծագործությունից շատ բան էր սպասվում։ Նրանք փառքով պսակեցին իրենց անունները, փրակելով մեզ՝ ավելի մեծ թափով շարունակել գիտության զարգացման գործը Հայաստանում։ Մյուս կողմից, պատերազմի հետևանքով, ՍՍՀՄ գիտական տարբեր կենտրոններից Հայաստան էին տեղափոխվել մեծ թվով գիտական աշխատողներ և բարձրորակ մասնագետներ, մի հանգամանք, որը թույլ տվեց որոշ բնագավառներում ավելի ուժեղացնել գիտական աշխատանքները։ Տեղում մնացած գիտական աշխատողները լարում էին բոլոր ուժերը՝ իրենց հայրենանվեր աշխատանքով մեր զինված ուժերին օգնելու համար։ Հայրենասիրական ոգևորության շնորհիվ, գիտական աշխատանքը ավելի ուժեղացավ, քան պատերազմի նախօրյակին էր. դրա հետևանքով հնարավոր դարձավ գիտությունների ակադեմիայի կազմակերպումը։ Բոլորիս համար՝ պարզ է, որ ակադեմիայի կազմակերպումը կապված էր նյութական խոշոր ծախսերի հետ։ Չմոռանալ, որ պատերազմի հետևանքով երկրում ստեղծվել էին շատ դժվար նյութական պայմաններ։ Երկրի զգալի մասը ավերվել էր գերմանական զավթիչների կողմից։ Սակայն, և՛ Սովետական կառավարությունը, և՛ ՀԿԿ Կենտկոմն ու կառավարությունը կանդաժառանգ աշխատողներին առաջ։

Հայաստանի ԳԱ հիմնադրումը պատերազմի ահեղ օրերին,

1943 թ. նոյեմբերին հանդիսացավ լենինյան աղգային քաղաքականության ամենահամոզիչ հաղթանակներից մեկը։ Այն հանդի-թյուններից մեկը, մեծ խանդավառություն առաջ բերեց հանրապե-տությունում, նոր հորիզոն բացելով Հայաստանի գիտության մեծագույն հոգատարություն և ուշադրություն էր ցուցաբերում ակադեմիայի կազմակերպմանը։ Հսկայական նշանակություն ունե-ցավ այն, որ բոլոր գիտական, ծրագրային և կազմակերպչական հարցերով անմիջականորեն ղեկավարում էր մեր Ակադեմիայի հիմ-նադիր և առաջին պրեզիդենտ, ակադեմիկոս Հ. Օրբելին։ Նրա բարձր պահանջկոտությունը և խստությունը գիտական աշխատանքի նկատմամբ հենց սկզբից ապահովեցին բոլոր հարցերի լուծումը բարձր մակարդակով։ Արդյունքը եղավ այն, որ մեր Ակադեմիան առաջօր զերծ է գավառականությունից, մի վտանգ, որի վրա միշտ ուշադրություն էր դարձնում մեր առաջին պրեզիդենտը։ Այսօր մի անգամ ևս հետադարձ հայացք գցելով այն սկզբունքների վրա, որոնք Հ. Օրբելին ջանում էր դնել նոր Ակադեմիայի հիմքում, մենք կարող ենք ասել, որ նա ելնում էր ճիշտ տեսակետներից։ Ահա ինչու նրա անունը մեր Ակադեմիայում միշտ շրջապատված է կլինի ամենայն հարգանքով ու սիրով։ Օրբելին պահանջում էր, որ գիտու-թյան տարբեր ճյուղերը զարգանան համաչափ կերպով, ըստ որում, այդ հարցում պետք է հաշվի առնվեն ինչպես հանրապետու-թյան կարևորագույն պահանջները, այնպես էլ սովետական գի-տության զարգացման ընդհանուր սկզբունքները։

Բարձր փնահատելով ակադ. Հ. Օրբելու խոշոր ծառայություն-ները Հայաստանի գիտության առաջ, մեր Ակադեմիան պետք է պատշաճ միջոցներ գտնի հավերժացնելու նրա հիշատակը։

Հաղթանակով ավարտվում էր Հայրենական պատերազմը, որին մեծ ոգևորությամբ մասնակցեցին նաև Հայաստանի խիզախ ուղի-ները։ Երկիրը պատրաստվում էր ծավալելու հսկայական շինարա-րական ծրագրեր խաղաղ պայմաններում, մասնավորապես, Հա-յաստանում ամենուրեք զգացվում էր տնտեսական զարգացման արագ տեմպերի անհրաժեշտություն։ Պարզ է, որ հանրապետու-թյան ժողովրդական տնտեսության նոր փերեքը պետք է հիմնվեր առաջին հերթին ինդուստրացման նոր լայն ծրագրերի իրականաց-ման վրա։ Այսօր արդեն կարելի է նշել, որ մեր հանրապետու-նը անցյալում ոչ միայն իրագործեց զարգացման հսկայական ծրա-

գրեր, այլև բառի բուն իմաստով աճեց: Հանրապետության բնակչությանը 1943 թ. համեմատությամբ, այժմ համարյա կրկնապատկվել է: Արդյունաբերական արտադրանքը ավելի քան 16 անգամ գերազանցում է միջպատերազմյան մակարդակը: Առաջադիմել է գյուղատնտեսությունը, բուրգորվին փոխվել է գյուղի դեմքը:

Մեծագույն նշանակություն տալով Հայաստանում արդյունաբերության զարգացմանը, Ակադեմիան իր գոյության առաջին տարիներից սկսած մեծ ուշադրություն դարձրեց ֆիզիկա-մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների զարգացման վրա, գիտակցելով, որ այդ բնագավառում մեր հանրապետությունում գիտությունը շատ խիստ ետ էր մնացել հանրապետական մի շարք այլ ակադեմիաներից: Առաջնահերթ զարգացում ստացավ ֆիզիկան: Հիմնադրվեցին Բյուրականի աստղադիտարանը, Մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտը, հետագայում նաև Հաշվողական կենտրոնը, Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը, Բյուրականի օպտիկա-մեխանիկական լաբորատորիան, Ակադեմիայի ընդերքում աճած Ֆիզիկայի ինստիտուտը: Մի շարք տեխնիկական գիտությունների հիմնարկներ կամ կազմակերպվեցին սկզբում, Ակադեմիայում և հետո հանձնվեցին արդյունաբերությանը, կամ ուղղակի Ակադեմիայի աջակցությամբ կազմակերպվեցին գերատեսչությունների ցանցում:

Ֆիզիկա-տեխնիկական և մաթեմատիկական գիտությունների ասպարեզում աշխատող ոչ բոլոր ինստիտուտներն են այսօր կարողանում ապահովել առաջավոր դիրքերը սովետական գիտության մեջ, սակայն նրանք բոլորն էլ կատարում են կարևոր հետազոտություններ, աշխատում են ակտուալ թեմաների վրա: Ավելին, նրանց մեջ կան հիմնարկներ, որոնք գիտության մեջ գրավել են աչքի ընկնող դիրքեր: Աստղագիտության նորագույն բաժնի՝ արտագալակտիկ աստղագիտության մեջ Բյուրականի աստղադիտարանը Միության մեջ գրավել է առաջատար տեղ: Այն հանգամանքը, որ Բյուրականում ծնունդ առած այնպիսի նոր գաղափարներ և տերմիններ, ինչպիսիք են՝ աստղասփյուռներ, տրապեցիալի տիպի սիստեմներ, գալակտիկաների կորիզներ, կորիզների ակտիվություն, Մարգարյանի գալակտիկաներ, գերաստղասփյուռներ, մտել են ընդհանուր թործածության մեջ միջազգային գիտական գրականությունում, ցուցանիշ է այն ազդեցության, որ ունի մեր այդ հիմնարկը աստրոֆիզիկայի զարգացման վրա:

Ֆիզիկոսներին հաջողվել է զարգացնել տարրական մասնիկնե-

րի ուսումնասիրության նոր մեթոդներ (որոնք ծնունդ են առել մեզ մոտ) և կարևոր արդյունքներ ստանալ տեսական ֆիզիկայի ասպարեզում: Լայն ճանաչում են գտել Հայաստանի մաթեմատիկոսում: Մեծ գործ է կատարվել Հայաստանում մաթեմատիկական հաշ-հետազայում ավելի ևս ուժեղացնել ուշադրությունը նոր մաթեմա-թյան նկատմամբ:

Մեխանիկների աշխատանքը սկսվել և շարունակվում է այժմ այնպիսի կարևոր բնագավառներում, ինչպիսիք են սողքի տեսու-թյունը, թաղանթների և սալերի տեսությունը և այլն: Այստեղ նույնպես նրանք մոծել են այնպիսի ավանդ, որը գնահատվում է մեր հանրապետության սահմաններից շատ հեռու:

Մեր գիտնականների կողմից ստեղծվել են կարևոր սարքեր, որոնք կիրառվում են տիեզերական կապի բնագավառում. դրանում մեծ դեր են խաղում մեր ռադիոֆիզիկոսները:

Հայաստանի գիտնականներն այս քառորդ դարում նպաստել են նաև տեխնիկական գիտությունների զարգացման գործին:

Ակադեմիայի գիտնականները մեծ դեր խաղացին մեզ մոտ հետպատերազմյան տարիներին էլեկտրատեխնիկական, ռադիո-տեխնիկական, էլեկտրոնային, սարքաշինական արդյունաբերու-թյան ստեղծման և զարգացման գործում: Հիմնականում մեր Ակադեմիայի աշխատակիցների ջանքերով հիմք է դրվել նաև օպ-տիկա-մեխանիկական արդյունաբերության զարգացմանը: Կան առաջին հաջողությունները գիտական սպասքաշինության ուղղու-թյամբ: Այստեղ պետք է նշել Բյուրականի օպտիկա-մեխանիկական լաբորատորիայի կողմից ստեղծված ավտոմատիկ միկրոֆոտոմետ-րը, որը, անշուշտ, լավագույնն է ժամանակակից նման գործիքների մեջ և մեծ պահանջարկ ունի: Այժմ, երբ նոր չափողական ավտո-մատ սարքերի ներդրումը և լայն կիրառումը դարձել է գիտության զարգացման նախապայմաններից մեկը, այդ գործը չափազանց կարևոր է: Տարբեր երկրների գիտական մրցության մեջ հաղթելու համար մեր երկիրը պետք է ունենա ամենակատարյալ գիտական սարքերի արագորեն զարգացող արդյունաբերություն: Հայաստանը կարող է և պետք է մեծ չափերով օժանդակի այս խնդրի լուծմանը, իր քաղաքներում ևս ստեղծելով համապատասխան արտադրող ձեռնարկություններ:

Այս խնդիրը կարող է լուծվել և պետք է լուծվի միայն միութենական ընդհանուր ջանքերով, սակայն փորձը ցույց է տալիս, որ Հայաստանը կարող է խաղալ բավականին մեծ դեր, որովհետև, ինչպես տեսնում ենք վերը հիշված դեպքերում, երբ անհրաժեշտ է, մեզ մոտ ստեղծվում են բարձրորակ սարքեր: Գիտական սարքերի ստեղծման ուղղությամբ արդյունաբերության ծավալումը այսօրվա հրամայական պահանջն է: Դա փաստորեն արդյունաբերության նոր ճյուղի ստեղծման հարց է և կապված է մեր հանրապետության ապագայի հետ: Իհարկե, գիտնականների կարծիքը այս հարցում չափազանց կարևոր է և ես կուզենայի մի երկու խոսք ասել այն տեսակետի մասին, որ մշակվել է Ակադեմիայում: Խնդիրը կայանում է նրանում, որ մենք փաստորեն ստեղծել ենք շատ բազմաճյուղ արդյունաբերություն և իհարկե առկա է հսկայական առաջընթաց հետպատերազմյան շրջանում: Սակայն այստեղ ամենակարևորը և ամենահետաքրքիրն այն է, որ ստեղծվել են արդյունաբերության նոր ճյուղեր, և հետագայում ևս պետք է ստեղծվեն նոր ճյուղեր ու ուղղություններ: Խնդիրը նրանումն է, որ եթե մեզ հաջողվի այնպես անել, որ նոր ուղղությունները, նոր ճյուղերը կազմակերպվեն այն բնագավառներում, որտեղ մենք կարող ենք վարձ ժամանակում հասնել բարձր որակի, այն ժամանակ, իհարկե, մեր արդյունաբերության զարգացումը կունենա ավելի մեծ հաջողություններ: Դա կլինի իսկական կուլտուրական ճանապարհ արդյունաբերության զարգացման համար: Դա հնարավոր է, որովհետև առանձին դեպքերում նման հաջողությունների մեր հանրապետությունը հասել է: Յուրօր սրտի, մենք հաճախ շեղվում ենք այդ ճանապարհից, մի շարք ճյուղերում երկար տարիներ շարունակ պաշտոնապես պլանավորվում է վատորակ, տեխնիկապես հնացած արտադրանք: Օրինակները շատ են, և ով գործ ունի գիտական-արտադրական հարցերի հետ, գիտե այդ օրինակները: Բոլորիս հայտնի է, որ մեզ մոտ Երևանի Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի կողմից արտադրվող խառատաշին հաստոցը երկար տարիներ արտադրվում է նույն տիպի, և բոլոր սպառողները դժգոհ են այդ արտադրանքից:

Նման բազմաթիվ փաստեր առկա են նաև գիտական կադրերի և մասնագետների պատրաստման բնագավառում: Մեր հիմնական խնդիրը և մեր պատվի գործն է, որ մեզ մոտ այն, ինչ արտադրվում և պատրաստվում է, որպես սկզբունք, լինի բարձրագույն որակի՝ լինեն դրանք հաստոցներ թե գիտական կադրեր: Հենց այդ հանգա-

մանքը ցույց է տալիս, թե ինչպիսի բարձունքների ենք մենք հասել, որ կարող ենք այդպիսի նպատակ դնել մեր առջև: Բայց քանի որ այդ հարցը երբեմն չի լուծվում, կամ դրա լուծումը մեծ ջանքեր է պահանջում, ցույց է տալիս, որ մենք ունենք շատ թերություններ և պետք է աշխատենք վերացնել այդ թերությունները:

Քիմիական գիտությունների բնագավառում դրությունը մի քիչ այլ է, որովհետև այդ բնագավառում մենք ունենք շատ լավ կադրեր: Այստեղ պետք է հիշել պրոֆ. Ղամբարյանի մինչևկադեմիական շրջանի գործունեությունը և նրա ջանքերը՝ քիմիան Հայաստանում զարգացնելու ուղղությամբ: Իհարկե դրանից հետո մենք շատ ենք առաջ գնացել, բայց այդ առաջին ջանքերը չպետք է մոռացվեն: Այստեղ մենք կարող ենք պարծանքով ասել, որ Հայաստանում քիմիան բազմաճյուղային է, և մենք ունենք շատ խոշոր հաջողություններ:

Մենք խոշոր հաջողություններ ունենք անօրգանական քիմիայի բնագավառում: Ակադեմիայի կողմից իր ժամանակին դրվեց Հայաստանի հսկայական հանքային հարստությունների օգտագործման հարցը և, իհարկե, ժամանակին միայն մասնակի լուծվեց: Մեր գիտնականների կողմից ստացված արդյունքները թույլ տվեցին մի շարք արտադրությունների հիմքերը դնել: Այժմ կարևոր հարցերից մեկը փրեանիտից օպտիկական ապակու ստացումն է: Գիտականորեն դա փաստորեն լուծված է: Այն ունի հսկայական, ժողովրդա-տնտեսական նշանակություն, եթե մեզ հաջողվի դա հետևողականորեն ներդնել:

Նուրբ օրգանական քիմիայի բնագավառում մենք ունենք հիանալի կադրեր, որոնք շատ գործ են կատարել ինչպես արտադրության հարցերի, այնպես էլ տեսական խնդիրների լուծման բնագավառում: Կատարված է շատ մեծ աշխատանք նոր, բարդ և օգտակար միացությունների ստեղծման գծով, մասնավորապես շատ կարևոր և հետաքրքիր դեղանյութերի ստեղծման բնագավառում: Այդ աշխատանքները բարձր են գնահատվել մեր կուսակցության և կառավարության կողմից և ՀՍՄ ԳԱ ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանին շնորհվել է «Սոցիալիստական աշխատանքի հերոս»-ի պատվավոր կոչում: Թե որքան կարևոր է նուրբ օրգանական սինթեզի բնագավառը, փրեան է այն փաստից, որ, օրինակ, Հունգարիայում կա այդ ճյուղի չորս խոշոր գործարան, որոնցից յուրաքանչյուրում աշխատում է 5 հազ. մարդ, այդ թվում հազար գիտաշխատող: Այնպես որ, երբ ասում են «փոքր» քիմիա, դա որոշ իմաստով է ճիշտ. դա չափազանց կարևոր բնագավառ է:

Մեզ մոտ զարգանում է քիմիայի մի նոր ուղղություն ևս. դա քիմիական տեխնոլոգիայի բնագավառն է: Այդ ուղղությունը մենք պետք է ապահովենք բոլոր անհրաժեշտ պայմաններով, քանի որ ունենք հնարավորություն այդ բնագավառում Միության մեջ դառնալ առաջատար:

Բայց այստեղ մենք ունենք մի մեծ թերություն. մենք չենք կարողանում մինչև վերջ հասցնել ներդրման գործը: Այստեղ մեծ մեղք ունեն մեր արտադրության ընկերները: Կարևոր է արտադրության կոլտուրայի քարձրացման հարցը: Մենք չպետք է կտրվենք կյանքից, որովհետև մեր ժողովուրդը շատ մեծ սպասելիքներ ունի մեր գիտնականներից: Մենք այդ սպասելիքները մասամբ արդարացնում ենք, բայց դեռևս շատ բան ունենք անելու:

Քիմիայի բնագավառում մեզ մոտ մի նոր ուղղություն էլ է ստեղծվել. դա քիմիական ֆիզիկայի բնագավառն է, որը զբաղվում է քիմիական տարրական պրոցեսների ուսումնասիրությամբ: Պետք է ասել, որ վերջին ժամանակներս, այս բնագավառում մենք ունենք խոշոր հաջողություններ: Այստեղ սպասվում են ոչ միայն տեսական, այլև գործնական մեծ արդյունքներ:

Շատ բան է կատարված Ակադեմիայում երկրաբանության բնագավառում: Ամենախոշոր աշխատանքն այն է, որ կատարվել է ընդերքի հարստությունների ուսումնասիրություն, և Ակադեմիայի աշխատանքները շատ դեպքերում հիմք են ծառայում արդյունաբերական հետախուզական աշխատանքների համար: Շատ հաճախ մեր Ակադեմիան անմիջապես մասնակցում է կոնկրետ օբյեկտների ուսումնասիրության գործին: Մասնավորապես հայտնի է մեր երկրաբանների մեծ աշխատանքը՝ կապված մոլիբդենային պաշարների հայտնագործման հետ: Մեր փայլուն հաջողություններից մեկն այն է, որ մեզ մոտ հայտնաբերվեցին երկաթահանքի չափազանց հարուստ և հիանալի պաշարներ: Մեծ դեր է խաղացել Ակադեմիան նաև ոսկու հայտնաբերման գործում: Մեր գիտնականները կարողացան հերքել այն սխալ տեսակետը, թե Հայաստանում ոսկի չկա: Մեծ է Ակադեմիայի դերը նաև ցրված և հազվագյուտ տարրերի ուսումնասիրության բնագավառում:

Որպես եզրակացություն պետք է ասել, որ Հայաստանն այսօր մեր Միության մեջ գուցե այն միակ տեղն է, որտեղ համեմատաբար փոքր տեղիտորիայի վրա կենտրոնացված են հսկայական հանքային հարստություններ: Այդ տեսակետից, մեր երկրաբանների խնդրն է՝ մտածել, թե ինչպես կարելի է ավելի խելացի ձևով

օգտագործել այդ անսպառ հարստութիւնները: Մեր գիտնականներ-
րի առաջ այժմ ավելի դժվար խնդիրներ են դրված՝ ուսումնասիրել
երկրի ավելի խոր շերտերը: Այդ հարցում մեծ անելիքներ ունեն
գեոֆիզիկոսները: Մեր հանրապետութեան խոր ընդերքը քիչ է ու-
սումնասիրված: Այդ տեսակետից մեծ նշանակութիւն ունեցավ
մեզ մոտ իր ժամանակին Գեոֆիզիկայի ինստիտուտի ստեղծումը,
որը հենց սկզբից կանգնեց ճիշտ ճանապարհի վրա, և մենք արդեն
ունենք առաջին կարևոր արդյունքները ինչպես երկրաշարժերի ու-
սումնասիրութեան գծով, այնպես էլ հանքային գեոֆիզիկայի բնա-
գավառում: Ստացվել են առաջին հուսադրող արդյունքները հան-
քային «կուլյր» մարմինների հայտնաբերման մեթոդների մշակման
գործում: Մենք մեծ ուրախութեամբ ընդունեցինք Գեոֆիզիկայի և
ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտը «Աշխատանքային կար-
միր գրոշի» շքանշանով պարգևատրելու լուրը:

Ակադեմիայի հիմնադրման պահին կենսաբանական գիտու-
թիւնների դրութիւնը նույնպես այլ էր, քան ասենք ֆիզիկա-մա-
թեմատիկական գիտութիւններինը: Այստեղ առկա էին մեծ թվով
գիտնականներ, ստեղծվել էին որոշ ավանդույթներ, և Ակադեմիան
շարունակեց ու զարգացրեց դրանք:

Կենսաբանութեան բնագավառում մենք ունենք կարևոր ար-
դյունքներ: Կատարվել են Հայաստանի բուսական աշխարհի լայ-
նածավալ ուսումնասիրութիւններ, բույսերի ֆիզիոլոգիայի գծով
հետազոտութիւններ և այլն: Լավ արդյունքներ ունենք նաև անտա-
ռապատման խնդիրների մշակման գծով, գյուղատնտեսական կեն-
դանիների հեմիֆոգների դեմ պայքարի մեթոդների մշակման
գծով: Առանձնապես պետք է նշել մեր միկրոբիոլոգների հաջողու-
թիւնները միկրոբիոլոգիական սինթեզի, ինչպես նաև բույսերի
պաշտպանութեան պրեպարատների ստեղծման բնագավառում: Այս
ինստիտուտը շատ մոտ է կանգնած արտադրութեան առաջ քաշած
հարցերի լուծման գործին: Նա մեծ ներդրում ունի նոր ստեղծվող
միկրոբիոլոգիական արդյունաբերութեան ստեղծման գործում: Դա
շատ կարևոր է, որովհետև, ինչպես ցույց է տալիս. անցյալի փոր-
ձը, երբ կազմակերպվում է նոր արտադրութիւն, ապա շատ կարե-
վոր է, որ նա ստեղծվի բարձր գիտական հիմքի վրա:

Մեր Ակադեմիայի առանձնահատկութիւններից մեկը ագրո-
քիմիական պրոբլեմների և հիդրոպոնիկայի ինստիտուտի առկա-
յութիւնն է: Այն հաջողութեամբ է զարգանում. արդեն առկա են
կարևոր արդյունքներ:

Համեմատաբար ցածր մակարդակից այսօր շատ բարձր մակարդակի են հասել աշխատանքները ֆիզիոլոգիայի բնագավառում: Հայաստանն այն կենտրոններից մեկն է, որտեղ շատ մեծ հաջողությամբ կատարվում են նյարդային համակարգության նուրբ պրոցեսների ուսումնասիրություններ նորագույն մեթոդների կիրառմամբ: Հետաքրքիր աշխատանքներ են կատարվում նաև նեյրոբիոնիկայի բնագավառում, ինչպես, օրինակ, պայմանական ռեֆլեքսների մոդելացման հարցը:

Բիոքիմիայի բնագավառում նույնպես մենք ունենք խոշոր հաջողություններ, հատկապես ուղեղի բիոքիմիայի բնագավառում: Կատարվել է մի շարք նոր նյութերի դերի պարզաբանում, ուղեղում նոր նյութերի անջատում:

Զարգացման ուղու վրա է նաև գենետիկան:

Կարևոր աշխատանքներ են տարվում նաև Սևանի հիդրոբիոլոգիական կայանում. դրանք ունեն գործնական մեծ նշանակություն: Վերջին ժամանակներում Ակադեմիան հատուկ ուշադրություն է դարձնում կենսաբանական հիմնարկների նյութական բազայի բարելավման վրա: Կառուցվել կամ կառուցվում են մի շարք ինստիտուտների շենքեր:

Այժմ մենք ուշադրությունը կենտրոնացրել ենք հասարակական գիտությունների հիմնարկների նյութական բազայի բարելավման հարցերի վրա: Այդ տեսակետից, հասարակական գիտությունների բնագավառի ինստիտուտները դեռևս չեն կարողանում ծավալել աշխատանքները ժամանակակից տեխնիկայի մակարդակի վրա:

Հասարակական գիտությունների բնագավառում, ավելի քան որևէ այլ բնագավառում, մեր հանրապետությունը ունեցել է կարեւոր գիտական տրադիցիաներ: Երբ Ակադեմիան հիմնադրվեց, նրա առաջին կազմի մեջ մտան մեր մշակույթի վերջին 100-ամյակի այնպիսի խոշորագույն մասնագետներ, ինչպիսիք են հայագետներ Հ. Աճառյանը, Հ. Մանանդյանը, Հ. Օրբելին, Մ. Աբեղյանը, Ս. Մալխասյանը և ուրիշներ: Դրա շնորհիվ հայագիտությունը հենց սկզբից մեզ մոտ ստացավ մեծ կշիռ, և այդ ուղղությունը Ակադեմիայի համար դարձավ ավանդական:

Շնորհիվ դրա, Ակադեմիան հայագիտության բնագավառում ունեցավ մի շարք խոշոր հաջողություններ: Առավելապես աչքի ընկան հնագիտության բնագավառում կատարված աշխատանքները: Իհարկե, անցյալում էլ եղել են պեղումներ, բայց այդ աշխատանքները, հատկապես, ծավալվեցին հետպատերազմյան շրջանում

և եղան ավելի նպատակասլաց։ Այդ պեղումները Հայաստանը Միության մեջ դարձրին ընդհանուր հետաքրքրության առարկա։

Մեծ քանակությամբ գրականություն է հրատարակվել Սովետական Հայաստանի նոր շրջանի պատմության վերաբերյալ։ Մենք այս վերջին՝ 20-րդ դարի պատմությունը մեր ժողովրդի պատմական ճակատագրի հարցում։ Այս տեսակետից, այդ շրջանին մեծագույն ուշադրությամբ վերաբերվելը մնում է անհրաժեշտություն, և մենք պետք է շատ աշխատենք, որպեսզի ավելի խոր հասկանանք այն հսկայական նշանակությունը, որ ունի այդ ժամանակաշրջանը։

Մեր գիտնականները դեռևս շատ անելիքներ ունեն, և այն հանգամանքը, որ Հայաստանի պատմության բազմահատորյակի պատրաստումը ձգձգվում է, մեզ պետք է շատ մտահոգի։

Լեզվաբանության գծով հսկայական աշխատանք է կատարվել և դեռ շարունակվում է կատարվել։ Մեծ նշանակություն ունի հայոց լեզվի գիտական քերականության ստեղծման գործը։

Խոշոր, շնորհակալ գործ է կատարում գրականության ինստիտուտը, պատրաստելով հայ դասական գրողների ստեղծագործությունների ակադեմիական հրատարակությունները։

Նրանց հաջողվեց գիտական բարձր որակով հրատարակել Ծ. Ջարենցիի վեցհատորյակը։ Ինստիտուտում մեծ ուշադրություն է դարձվում գրական կապերի հարցին։

Մեծ նշանակություն ունի տնտեսագետների աշխատանքը։ Այստեղ գուցե հաջողությունները դեռ համեստ են։ Այնուամենայնիվ, մենք գտնում ենք, որ մեր տնտեսագետները կարողացել են մանրակրկիտ լուրջ աշխատանք տանել և մոտ ապագայում պետք է սպասել կարևոր արդյունքների։ Ակադեմիան հենց սկզբից դրել է այն խնդիրը, որ հասարակական գիտությունների ընդգլխավորում ավելի արագորեն ներդրվեն քանակական մեթոդները։ Պետք է ասել, որ մեր հասարակագետները այդ ուղղությամբ դեռևս շոշափելի հաջողություններ չունեն։ Հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյում պետք է ընդգրկել այնպիսի մարդկանց, որոնք ակտիվորեն հետաքրքրվում են քանակական մեթոդների զարգացման հարցերով։

Ահա սրանք են մոտավորապես այն ուղղությունները, որ զարգացել են մեզ մոտ այս 25 տարվա ընթացքում։ Եթե մենք նայենք այդ ուղին հնգամյակ առ հնգամյակ, ապա կտեսնենք, որ հնգամ-

յակից հնգամյակ մեր աշխատանքը և, համապատասխանաբար, ջանքերը ուժեղացել են: Բայց եղել են դեպքեր, երբ որոշ բնագավառներում մենք նահանջել ենք:

Զպետք է մոռանանք նաև այն հանգամանքը, որ երբ Ակադեմիան հիմնադրվեց, գիտությունը Հայաստանում ամբողջապես կենտրոնացված էր Ակադեմիայում: Այժմ գիտությունների ակադեմիայից դուրս աշխատում են մի քանի անգամ ավելի շատ գիտական աշխատողներ, քան մեզ մոտ: Ուրեմն գիտությունը մեր հանրապետությունում շատ է ծավալվել, և այստեղ մեծ դեր է խաղացել Ակադեմիան, որը նպաստել է այս պամ այն ուղղության զարգացմանը, նոր հիմնարկների ստեղծմանը:

Սակայն մեր գիտությունը չի կարող հաջողությամբ առաջ շարժվել, եթե մենք կապված չլինենք սովետական ամբողջ գիտության հետ: Մեր լավագույն կադրերը շատ հաճախ իրենց պատրաստությունը ստացել են Մոսկվայում, Լենինգրադում և այլ գիտական կենտրոններում: Սակայն արդեն ժամանակն է, որ հանրապետական ակադեմիաները, այդ թվում նաև Հայաստանի Ակադեմիան ավելի սերտ և իսկական համագործակցություն կազմակերպեն Միության այլ գիտական հիմնարկների հետ: Իհարկե, որոշ բան այդ ուղղությամբ կատարվում է: Բայց պետք է նշել, որ քիչ են դեպքերը, երբ իսկապես համատեղ աշխատանք է կատարվում այն իմաստով, որ աշխատողները գնում են հենց տեղում կատարելու համապատասխան փորձեր, հետազոտություններ, կամ գալիս են մեզ մոտ, որը ավելի հազվադեպ է: Դա մեծ թերություն է և ցույց է տալիս, որ գիտական աշխատանքի կազմակերպումը մեր ամբողջ երկրում այնպիսին չէ, ինչպես հարկն է: Բնականաբար, այդպիսի պահանջներ պետք է լինեն, գիտության զարգացումը պետք է հասցնի նրան, որ մարդիկ միավորեն իրենց գիտելիքները այս կամ այն գիտական դժվար պրոբլեմը լուծելու համար: Այդպիսի համագործակցության հիմնական առդյունքը վերջիվերջո լինում է բարձր մակարդակի: Դրա վառ վկայությունն են տիեզերքի նվաճման բնագավառում մեր գիտնականների, հիրավի, խոշոր արդյունքները:

Մենք պետք է շարունակենք ավելի պահանջկոտ և ուշադիր հետևել այս հարցին:

Գիտական կապերի զարգացման հարցում ևս մենք ունենք խոշոր առաջընթաց: Մեր Ակադեմիան թերևս առաջինն է հանրապետական ակադեմիաներից, որ անմիջականորեն համաձայնագիր է

կնքել արտասահմանյան գիտությունների ակադեմիայի հետ՝ գիտական համագործակցության վերաբերյալ: Խոսքը Հունգարիայի ակադեմիայի հետ կնքված համաձայնագրի մասին է: Դեռևս քիչ են արտասահմանյան գործուղումները, մենք պետք է պայքարենք այդպիսի գործուղումների քանակն ավելացնելու համար: Երիտասարդ գիտական աշխատողներին պետք է ուղարկել երկարատև գործուղումներին:

Առաջին փորձերը ցույց տվեցին, որ մեր Ակադեմիայի համար շատ կենսական և օգտավետ են գիտնականների փոխանակման նոր պաշտոնական համաձայնագրերը: Այժմ օրակարգում է ԳԴՀ-ի գիտությունների ակադեմիայի հրավերով պատվիրակություն ուղարկելը: Արդեն նախապատրաստվել են մի շարք նյութեր և հույս ունենք, որ մեր այս երկրորդ փորձը կլինի ավելի նպատակասլաց և արդյունավետ: Մենք կապեր ունենք նաև կապիտալիստական երկրների մի շարք գիտնականների և գիտական կենտրոնների հետ: Այդպիսի գործնական կապեր ունի, օրինակ, Բյուրականի աստղագիտարանը Մերսիկայի աստղադիտարանի հետ, նրանց միջև կատարվում են աշխատանքների սիստեմատիկ փոխանակում և գործիքների փոխադարձ օգտագործում: Մենք համագործակցության մեջ ենք նաև ֆրանսիական աստղագետների հետ: Պետք է ասել, որ արտասահմանյան գիտնականները բարձր են գնահատում մեր գիտնականների աշխատանքը: Մեծ գոհունակությամբ պետք է նշել, որ Հունգարիայի պոլիտեխնիկական համալսարանը պատվավոր դոկտոր է ընտրել մեր հանրապետության Ակադեմիայի իսկական անդամ Ի. Վ. Եղիազարովին:

Այս տարի Երևանում կկայանա նաև գիտությունների միջազգային միության խորհրդի գործադիր կոմիտեի նիստը¹, Բացի խորհրդի նիստերից, կլսվեն նաև հրապարակային դասախոսություններ միջազգային գիտական համագործակցության մասին:

Մենք մեր առաջ հարց պետք է դնենք, թե ինչպես է զարգանալու մեր գիտությունը հաջորդ քառորդ դարում: Իհարկե, գիտությունը մարդկային գործունեության այնպիսի բնագավառ է, որ հեշտությամբ չի կարելի փոխել նրա ուղղությունները: Նոր ուղղությունների ստեղծումը կապված է նաև առանձին մարդկանց հետ, որոնք բացառիկ հետևողականությամբ և իրենց տաղանդի, էրուդիցիայի ուժով կարողանում են կարճ ժամանակամիջոցում ստեղծել

¹ Նիստը տեղի է ունեցել 1969 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 7-ը (ծնթ. խմբ.):



նոր պայմաններ՝ այդ նոր գիտության զարգացման համար: Դա դժվար գործ է և պահանջում է վերին աստիճանի նվիրվածություն և կամք: Այդ նոր ուղղությունները կառաջանան մի կողմից ֆունդամենտալ գիտությունների պահանջներից, մյուս կողմից՝ մեր հանրապետության ժողովրդական տնտեսության պահանջներից: Օրինակ, մեր հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման հետ կապված այն բոլոր տեխնիկական խնդիրները և պրոբլեմները, որոնք չեն կարող տեղավորվել որևէ առանձին գերատեսչությունում, պետք է մշակվեն առաջին հերթին Ակադեմիայի կողմից: Ասենք, օրինակ, ոչ մի գերատեսչություն չի կարող հանձն առնել այնպիսի կարևոր պրոբլեմի մշակման հարցը, ինչպիսին է մեր բացառիկ մոլիբդենային հարստությունների կոմպլեքսային մշակման հարցը: Փաստ է, որ մեզ մոտ մոլիբդենային հարստությունը դեռևս չի օգտագործվում որպես կոմպլեքսային նյութ:

Այս պրոբլեմի լուծումը կարող է հաղթահարվել միայն Ակադեմիայում: Այդ նպատակով մենք հետազայում պետք է ունենանք հատուկ գիտահետազոտական հիմնարկ: Այդպիսի հարցեր մեզ մոտ կծագեն և հետագայում: Բայց պետք է նշել, որ հենց գիտական աշխատանքի բնույթն այս 25 տարիներում հիմնավորապես փոխվել է: Այժմ մենք տեսնում ենք, որ փոքր կոլեկտիվները այնքան էլ էֆեկտիվ չեն:

Մենք պետք է ըստ ամենայնի ամրացնենք եղած ուղղությունները: Մենք չպետք է գնանք մեծ թվով նոր ինստիտուտների ստեղծման ճանապարհով, այլ պետք է ամրացնենք հները: Մի կողմից պետք է շարունակել այն գիծը, որ մեզ մոտ ավելի շատ նոր տեսակի ժամանակակից գիտական գործիքներ ստեղծվեն, որ Հայաստանում առհասարակ ստեղծվի գիտական գործիքների արտադրություն: Մյուս կողմից, քանի որ գիտական փորձերի բնագավառում նույնպես կատարվում են շատ մեծ փոփոխություններ, անհրաժեշտ է ունենալ բազմաթիվ, մեծաքանակ փորձեր, որոնց արդյունքներն անհնար է մշակել, առանց այդ փորձերի ավտոմատացման: Դա մեծ խնդիր է, որին մենք պետք է անպայման հետևենք մեծ ուշադրությամբ: Մենք ունենք մեծ հնարավորություններ, որովհետև մեզ մոտ կա մաթեմատիկական մեքենաների արտադրություն: Այսպիսով, գիտական փորձերի ավտոմատացման պրոբլեմը մեծ պրոբլեմ է, և մենք այդ գործում մեծ խնդիրներ ունենք: Մենք պետք է մարդկանց սովորեցնենք, ընտելացնենք դրան, որպեսզի հտ չմնանք:

Այս հարցի լուծման համար մեծ նշանակություն ունի կադրերի և, հատկապես, օժանդակ կադրերի ճիշտ ընտրությունը:

Ավտոմատացման գիտական փորձերի հարցերով զբաղվելու համար Ակադեմիային ամենաքիչը հարկավոր է 200 մարդ: Այդ հարցում մեզ պետք է շատ օգնի բարձրագույն դպրոցը: Ժամանակն է, որպեսզի մեզ մոտ ստեղծվի ուսդիտեսիսնիկական ֆակուլտետ: Մյուս կարևոր հարցը դա գիտական հետազոտությունների արդյունավետության հարցն է: Փաստ է, որ մեր հիմնարկների մի մասը դեռ չի տալիս անհրաժեշտ չափով գիտական արժեքներ, կամ այդ արժեքները չեն գտնում համապատասխան որակական, նպատակադիր կիրառում: Մեր նպատակը պետք է լինի հանրապետությունում ունենալ ամենաբարձր որակի գիտություն: Դա շատ պատասխանատու և պարտավորեցնող խնդիր է:

Մենք շատ վատ վիճակում ենք հրատարակությունների տեսակետից: Իհարկե, մենք կատարել ենք մեծ գործ, Հայաստանում ստեղծելով առաջին գիտական պարբերական հանդեսները: Եղած սիստեմը դեռևս բավարար չէ և այդ ցանցը պետք է վերանայի: Մենք պետք է մեր ամենօրյա պահանջկոտությամբ անընդհատ բարձրացնենք մեր հանդեսների մակարդակը, որպեսզի հանդեսների ամեն մի համարը անմիջապես սպառվի գիտական հասարակայնության կողմից: Կա նաև մի ուրիշ կարևոր խնդիր. գիտական ինֆորմացիայի ժամանակակից ձևերը արդեն չեն կարողանում, մեզ բավարարել: Խնդիրը կայանում է նրանում, որ այսօր այնքան շատ են հրատարակվում հանդեսներ, որ փաստորեն ստեղծվել է ինֆորմացիայի տարափ, որի մեջ մեր գիտությունը, և ընդհանրապես համաշխարհային գիտությունը, խեղդվում է: Ուրեմն, բացի հին մեթոդներից (գիրք, հանդես և այլն) պետք է որոնել նոր մեթոդներ: Օրինակ, տարածում է գտնում նախատիպերի տարածման եղանակը: Պետք է պայքարել հանդեսների լեզվի համար: Նրանց ոճը պետք է լինի հակիրճ, որովհետև գիտական տպագիր օրգաններ են: Որպես առաջնահերթ խնդիր մենք պետք է դնենք Ակադեմիայի պոլիգրաֆ կոմբինատի ստեղծման հարցը: Դա կապահովի մեր հրատարակությունների որակը:

Մենք մեծ ուշադրություն պետք է դարձնենք մեր գիտական արտադրանքի ներդրման հարցերի վրա: Շատ հաճախ մեր գիտնականները ավարտելով որևէ հետազոտություն և փորձելով այն ներդնել, մինչև վերջ հետամուտ չեն լինում դրանց ներդրմանը, և այդ արդյունքները հաճախ տարիներ ի վեր չեն հասնում արտա-

դրությանը: Ամռանը մեր՝ Պետպլանի հետ համատեղ անցկացրած
խորհրդակցութիւնը ցույց տվեց, որ մենք շատ բան ունենք արտա-
դրության մեջ ներդնելու. միայն անհրաժեշտ է լրջորեն զբաղվել
դրանով:

Ամփոփելով ասածս և ծանոթ լինելով մեր երիտասարդության
ձգտումներին, նրանց անսահման սիրուն դեպի գիտութիւնը, դեպի
աշխատանքը, մենք կարող ենք համարձակորեն նայել դեպի ապա-
քան և համոզված լինել, որ մենք կունենանք ավելի մեծ նվաճում-
ներ և հաջողութիւններ: